Մրցույթի հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

դասախոսի թափուր տեղերի համալրման համար

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ»-ի հետևյալ մասնագիտական մոդուլների դասախոսի թափուր տեղերի համար.

1.	Ավտոմատիկայի հիմունքներ ՄՏԿ 5-15-023	102 ժամ
2.	Մեխատրոնային սարքավորումների ազդանշանների մշակման մեթոդները ՄՏԿ 5-15-018	34 ժամ
3.	Մեխատրոնային համակարգում օգտագործվող ղեկավարման սկզբունքները ՄՏԿ 5-15-020	36 ժամ
4.	Ապարատածրագրային համակարգերի գործիքային միջոցների, տեխնիկական և ծրագրային ապահովում ՀՀՑՏ 5-21-034	96 ժամ
5.	Տվիչների և ձևափոխիչների օգտագործումը մեխատրոնային համակարգերում ՄՏԿ 5-15-017	36 ժամ
6.	Տեխնիկական սպասարկում ՄՏԿ 5-15-027	64 ժամ
7.	Ռոբոտաշինություն	32 ժամ
8.	Միկրոպրոցեսորներ ՀՀՑՏ 5-21-022	28 ժամ
9.	Միկրոկոնտրոլերներ ՀՀՑՏ 5-21-023	28 ժամ
10.	Միկրոպրոցեսորների և միկրոկոնտրոլերների ծրագրավորում և ներկառուցված ինտերֆեյսային համակարգեր ՀՀՑՏ 5-21-024	42 ժամ

Դասախոսի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները.

- Դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում:

Թեկնածուն պետք է համապատասխանի նաև «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին:

Մրցույթը անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2026 թվականի օգոստոսի 25-ը ներառյալ, յուրաքանչյուր օր՝ ժամը 10:00-ից մինչև 16:00-ն, բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի:

Մրցույթը կանցկացվի 2026 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 11:00-ին, ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Մամիկոնյանց փողոց 52:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 20-96-01 հեռախոսահամարով: